

ԵՐԵՍՈՒՆ ՏԱՐԻ ԱՌԱՋ

ԿՐԹՆԱԿԱՆ

ԽԱԶՎԵՐԱՑԻ ՏՕՆԸ

“ՀԱԻԱՏՈՎ ԽՈՍՏՈՎԱՆԻՍ”

ԵՒ ԵՐԿԻՐ ՊԱԳԱՆԵՄ

Ամեն. Ս. Պատրիարք Հայրը(*) այս տարի, Ս. Խաչի տօնին (Սեպտ. 30 կիր.) հանդիսութիւններուն փայլը աւելցուց իր ներկայութեամբ:

Առաւել Ն. Ամեն. Արքայեպիսկոպոս Ս. Պատարագ մատուց Սրբոց Յակոբեանց Տաճարին մէջ և խօսեցաւ կրօնաշունչ քարոզ մը բնարան դնելով Պօղոս Առաքեալին սա՛ հաւատաւոր. «Իբրեւ srsulեալք, եւ հանապազ ուրախ եմք» (Բ. Կրնթ. 2. 10), և ըսաւ — «Կեանքի հակասութիւններն են որ կ'ապահովեն անոր նորոգումը, թէ՛ բնական երկոյթներուն և թէ՛ մարդկային գոյութեան բոլոր շրջաններուն մէջ: Կեանքին նմանութեամբ մը, տրամութեան և ուրախութեան հակապատկերներն ալ իրարու կը յաջորդեն մեր կրօնական զարգացումին ամէն մէկ վայրկեաններուն, և այդ փոփոխ վիճակներուն շնորհիւ կը նորոգուի մեր հաւատքը: Խաչն ըլլալով նշան մը ցաւի և արցունքներու, եղած է ու կ'ըլլայ նաև նշան մը ցնծութեան ու մխիթարութեան: Ատո՛վ է որ քրիստոնեան կը պահէ իր հոգեկան հաւասարակշռութիւնը, առանց անձնատուր ըլլալու այդ ներհակ տրամադրութիւններէն մէկին կամ միւսին: Այսպէս կ'ըմբռնենք մեր կեանքին համար խաչին կատարած դերը, և ատո՛վ է որ մեր հոգիները ուրախ ըլլալէ չեն դադրիր՝ երբ կը տրտմինք ո՛րեւէ վիշտի պատճառով»: (Սիոն, 1928 Հոկտ. - Նոյեմբ., էջ 348):

(*) Դուրեան Պատրիարք:

«Հաւատով խոստովանիմ եւ երկիր պապաւեմ Քեզ,
«Հայր եւ Որդի եւ Ս. Հոգի, անեղ եւ անմահ բնութիւն,
«Արարիչ հրեշտակայ եւ մարդկան եւ ամենայն եղեցոց,
«Ողորմեա Քո արարածոց եւ ինձ՝ խոզմամեղիս»:

Ներսէս Ծնորհալի Հայրապետի «Հաւատով խոստովանիմ» աղօթաչափին առաջին հինգ(*) տուները, կ'ըսէինք մեր նախորդ գրութեան մէջ, առաւելարար հաւատոյ և պաշտաման վերաբերեալ կէտեր կը պարունակեն իրենց մէջ: Այլ բացատրութեամբ հաւատոյ տրեւաներ կը պատրաստեն գետինը որպէսզի աղօթաւորը բարձրանայ Առաւելոյ ներկայութեան Անոր մատուցանելու համար նախ պաշտամունք և ապա իր որտիւ խնդրանքները: Առաջին այս տունը սակայն բացատրութիւն մըն է 24 տուներուն մէջ այնու որ գրեթէ ամբողջութեամբ հաւատոյ խոստովանանք և պաշտամունք է և միակ ընդհանուր խնդրանք մը ունի վերջին տողին մէջ, որ կը կրկնուի միւս բոլոր տուններուն մէջ:

Երբ կը ձեռնարկենք այս սքանչելի աղօթաչափին մէն մի տունը ընդլայնումի և պարզումի ենթարկել, մեր նպատակն է նախ շեշտել և վերլուծել այս աղօթքի մէջ յայտնուած կրօնական ճշմարտութիւնները, և ապա անդրադառնալ նաև պաշտամունքի վերաբերեալ կարգ մը գործնական և արարողական սովորութեանց՝ որոնք անտեսուելու կամ մոռացուելու տրուելու վտանգին ենթարկուած են մեր եկեղեցւոյ անդամներուն կողմէն:

Նիւթին մօտեցումի մեր մեթոտը պիտի ըլլայ վերցնել իւրաքանչիւր տունի կարեւոր հաւատաւորները կամ կէտերը և ընդլայնել զանոնք մի առ մի:

«Հաւատով խոստովանիմ». ներկայիս

(*) Նախորդ յօդուածի մէջ սխալմամբ տպագրուած է չորս (Սիոն, Յուլիս - Օգոստ., էջ 165, ր. սխառակ, ներքեւէն 13րդ տող):

հասարակ գործածութեան մէջ խոսովանիլ կը նշանակէ մեղքերը հրապարակել, կամ գաղտնիքներ դուրս տալ: Սակայն մեր դասական լեզուին մէջ առ հասարակ խոսովանիլ կը նշանակէ ճշմարտութիւն մը ի լուր աշխարհին յայտարարել: Այս իմաստով է որ ի հնումն իրենց հաւատքը արկարար և հրապարակաւ յայտարարողները, և այդ իսկ պատճառով չարչարանքի և ծեծի ենթարկուող Քրիստոնեաները կը կոչուէին «խոստովանողներ», ինչպէս կ'երգուի Ս. Լուսուօրչի Շարականին մէջ, անոր չարչարանաց կապակցութեամբ. «Սոստովանող վկայ Քրիստոսի Տէր Գրիգորիս»:

Կրօնքի և ազօթքի հիմքը հաւատքն է. առանց հաւատքի երկուքն ալ գոյութիւն չեն կրնար ունենալ: Ան որ Աստուծոյ կը մօտենայ՝ նախ սրտով հաւատալ պարտի և ապա բերնով խոստովանիլ՝ թէ կա՛յ Աստուած: Որուն կը պարտին իրենց գոյութիւնը թէ՛ ինք և թէ՛ համագոյքը, և Որուն փառքը պէտք է պատմէ տիեզերքը և զՈր պէտք է պաշտէ բանաւոր արարածը:

«Երկիր պազանեմ». ծունկի գալով ձեռքերն ու ճակատը գետին դնել ու համբուրել դայն՝ արարողական արտայայտութիւն է Աստուծոյ առջև խոնարհումի և Անոր կամքին համակերպելու և դայն պաշտելու: Իրականութեան մէջ «պաշտամունք» բառին, որ ծառայութիւն կը նշանակէ, տեսանելի և թանձրացեալ արտայայտութիւնն է երկրպագութիւնը: Մեր բոլոր ներքին ապրումները կը ձգտին իրենց համապատասխան տեսանելի արտայայտութիւնը գտնել. որքան ուժգին ըլլայ ներքին ապրումը նոյնքան անդիմադրելի և ինքնաբեր կ'ըլլայ անոր տեսանելի արտայայտութիւնը: Երբ կ'ազօթենք և Աստուծմէ բան մը կը խնդրենք, մեր բաղուկները ինքնաբերաբար և ազաւական ակնկալութեամբ դէպի երկինք կը բարձրանան: Եթէ զԱստուած գիտակից անկեղծութեամբ Տէր կը դաւանինք, ինքնաբերաբար մենք զմեզ ծառայի գերին մէջ կը գնենք: Անոր նկատմամբ, եթէ Աստուծոյ դէմ ըմբոստացած ենք, ուրիշ խօսքով՝ եթէ մեղք գործած ենք, ու կ'անդրադառնանք մեր ըրածին յիմարութեան, առաջին ինքնաբեր շարժումը կ'ըլլայ «անկեալ յերկիր» ճակատը գետին դնել, խոնարհելու համար զընդ հզօր ձեռամբն Աստուծոյ» (Ս. Պետր., Ե., 6):

Երկիր պազանելը, իբր խոր յարգանքի և խոնարհեցման արտայայտութիւն, շարունակաբար կիրարկուած է թէ՛ Հին և թէ՛ Նոր Կտակարաններու մէջ: Աբրահամ աստուածային այցելուները զիմաւորեց երկիրպագութեամբ: Մոգեր երբ Մանուկ Յիսուսը գտան «անկեալ երկիր պազանէին նմա»: Սատանան Յիսուսը փորձելու ատեն պայման դրաւ Անոր որ աշխարհի բոլոր թաւաւորութիւնները և փառքը իրեն կուտայ «եթէ անկեալ երկիր պազանիցես ինձ»: Յիսուս պատասխանեց Աստուածաշնչական պատուէրը մէջ բերելով. «Տեսան Աստուծոյ Բուժ Երկիր պագցես և զնա միայն պաշտցես»: Ուրեմն Յիսուսի իսկ հաւատումով երկիր պազանել և պաշտել իրարու գրեթէ համազօր եղբեր և արարքներ են: — Արդարեւ երկրպագութեամբ պաշտամունքի մասնակցիլ ամենասովորական երևոյթ մըն էր ի հնումն: Գերագոյն պաշտամունքին, այսինքն Ս. Պատարագի ընթացքին, ինչպէս նաև առօրեայ պաշտամանց բոլոր ազօթքներու մէջ, խաղաղութեան տըլուութենէ վերջ շարունակ հրաւէր կ'ըլլայ պաշտամանց մասնակցողներուն «Աստուծոյ երկիր պագեցուք»: Ի հնումն այս հրաւէրին վրայ, առհասարակ պաշտամունքի բոլոր մասնակցողներ, իրեն մէկ մարմին, կ'ըլլայ նախնի գետին և երկրպագութիւն կ'ընէին: Ներկայիս սակայն ստոյգ է թէ տիրող բարքեր, մտայնութիւններ և մանաւանդ գործածուող հագուստի տարազներ արգելք են այս հրաւէրի դասական կիրարկութեան: Այս նկատմաներով Լատին եկեղեցիի մէջ երկրպագութիւնը ծնրադուրեան վերածուած է. իսկ Էսողոքական քրիստոնեաներու մէջէն իսպառ վերցուած է: Նոյն ընթացքը ակնհայտ է նաև մեր մէջ: Ամերիկայի հայ եկեղեցիներու մէջ, ինչպէս նաև գրեթէ ամէն տեղ ուր հոտարանի գրութիւնը ընդհանրացած է, բոլորովին վերցուած է երկրպագելու սովորութիւնը: Մեր հին սերունդի և հին աշխարհի մէջ է որ այս վաղընջական ու Ստուածաշնչական կրօնական արարմունքը դեռ իր գոյութիւնը կը շարունակէ:

Կրօնական և ընկերային արարմունքներու մէջ էականը ոգին և սկզբունքն է: Ու է արարմունք որ չրսի սկզբունքէ մը կամ ոգեղէն ապրումի մը արտայայտու-

թիւներ չէ. անխման է և կեղծիք: Միւս կողմէն ունի սկզբունք և ներքին ապրում որ իր անասունի արտայայտութիւնը չի գտնել՝ մեռել է, ուժականութենէ և կենսունակութենէ զուրկ է: Հետեւաբար այս երկուքը, ոգի և արտայայտութիւն, կամ սկզբունք և կիրարկութիւն, միասին կ'ընթանան, մին առանց միւսին մեռել է: Այս երկուքին մէջ տարբերութիւնը այն է որ մին (ոգին և սկզբունքը) անփոփոխ է, իսկ միւսը՝ (արտայայտութիւն և կիրարկութիւն) փոփոխական կրնայ ըլլալ: Մէկ և նոյն սկզբունքը բազում կերպերով կարելի է կիրարկել: Հետեւաբար կըր ժամանակներու բերումով և պահանջքով տառապէս երկրպագելը կը վերնայ, անոր հետ պէտք չէ մեռնի նաև անոր ետին կեցող սկզբունքը: այլ արտայայտութիւններով: Երկրպագութեան մերձաւորագոյն արարմունքը խոր խանդութիւնն է: Հետեւաբար ըլլայ ժամերգութեան ընթացքին, կամ ըլլայ Ս. Պատարազի միջոցին երբ Աստուծոյ երկիր պագեցուցաւ հրաւիր կողմայ, բոլոր աղօթաւորները, իբրեւ մէկ մարմին պէտք է ծոխն և խորունկ խոնարհութիւն մը ընեն: Դիտաւոր արարմունքը որով եկեղեցիի ներկաները պաշտամունքի կը մասնակցին գրեթէ այս է միայն: Այլապէս՝ ներկաները կը վերածուին լոկ հանգիստաններու: Իսկ հանդիսատես ըլլալու համար եկեղեցի երթալը ոչ բարոյական պարտաւորութիւն է, ոչ եկեղեցիի հրահանգն է և ոչ ալ՝ Աստուծոյ կամքն է: Իսկ աստուածային պաշտամունքին գործնականապէս մասնակցելու համար երթալը երեքն ալ է միանգամայն:

«Քեզ, Հայր եւ Որդի եւ Սուրբ Հոգի»: Հաւատքով խոստովանանք և երկրպագութիւնը կ'ուղղուին Աստուածութեան երեք Անձերուն: Նկատելի է որ երեք Անձերուն համար գործածուած դերանունը եզակի է, «Քեզ»: Առանց խորանալու աստուածաբանական հարցերու մէջ, պէտք է հաստատել որ Քրիստոնէական կրօնքի դաւանանքի հիմնական մասն է հաւատալ ի Հայր, յՈրդի և ի Ս. Հոգի: Քրիստոնէական եկեղեցիի դաւանաբանական հիմնական տարբերութիւնը այս է միւս բոլոր կրօնքներէն: Աշխարհի միւս բոլոր կրօնքները երկու գլխաւոր խումբերու կը բաժնուին. ա) բացարձակ միաս-

տուածութիւն, ինչպէս են Մոլոմոսականութիւնը և Մահմետականութիւնը, և բ) բազմաստուածութիւն, որ իր մէջ կը բաժնուի գրեթէ միացելու բոլոր կրօնքները:

Քրիստոնէական հասկացողութեամբ Աստուած անձնուոր էակ մըն է, այսինքն անհունօրէն բանաւոր, ինքնագիտակից և ինքնակամ Հոգի մըն է: Կոյր և աննձնական ոյժ մը չէ: Ինականաբար Աստուծոյ անձնականութիւնը անհունօրէն կը գերազանցէ մարդկային անձնականութիւնը, որ իր մանրանկար պատկերն է միայն: Աստուածութիւնը ոչ միայն անձնական է այնպէս իր մէջ գոյութիւն ունին երեք Անձեր: Այս ճշմարտութիւնը մարդկութեան տրուած է գերբնական յայտնութեամբ: Մարդ իր բանականութեամբ բնութիւնը ուսումնասիրելով կը հասնի Աստուծոյ գոյութեան ճշմարտութեան, սակայն երեք ի վիճակ պիտի չըլլար գտնելու Աստուածութեան մէջ երեք Անձերու գոյութեան ճշմարտութիւնը՝ եթէ այդ յայտնուած չըլլար իրեն: Ուրեմն Քրիստոնեաներս կը հրաւիրուին հաւատալու և պաշտելու մէկ Աստուածութիւն միայն, որ մեզի կը յայտնուի երեք Անձերով: Մեր յախտնական կեանքը մեզի կ'իջնէ երեք աղբւրներէ. Հայր, Աստուծմէ՝ որ կը ստեղծէ զմեզ: Որդի Աստուծմէ՝ որ կը փրկէ զմեզ. և Հոգի Աստուծմէ՝ որ կը սրբացնէ զմեզ: Հայր, Որդի և Ս. Հոգի միասնաբար կը կոչուին Ս. Երեւոյթիւն, որու մասին, ինչպէս Անձերէն խրատան չիւրի մասին, կ'անդրադառնանք աւելի հանգամանօրէն յաջորդ տուններու մէջ:

«Անել եւ անմահ բնութիւն». Աստուածութեան մասին շատ խտացել հաւատաւոր մըն է այս: Բնութիւնը բառը հայերէն լեզուի մէջ ամենէն զգուար հասկնալի, և հետեւաբար՝ զգուար բացատրելի բառ մըն է: Եթէ մինչև իսկ փորձ ընենք գայն սահմանել, դարձեալ կը մնայ զգուար ըմբռնելի հասարակ միտքերու համար, որովհետև այս բառը միտքով միայն բռնուելիք գաղափար մը կ'արտայայտէ. այլ բացատրութեամբ՝ մեր զգայարաններուն՝ և հետեւաբար մեր զգալի փորձառութեան ներքեւ ինկող իրականութիւն մը չի ներկայացներ, այլ՝ մաստատւորօրէն միայն ըմբռնուած գաղափար մը կ'արտայայտէ: Բառին այս վերափար մը կ'արտայայտէ: Բառին այս վերափարն հանգամանքը պատճառ հղած է որ

տարբեր-տարբեր խմատներով հասկացուի այն և ծնունդ տալ անհատներով եկեղեցական վեճերու, մինչև իսկ պատճառ դառնալով եկեղեցական անդամաների և անգիրադատների բաժանու մներու:

Բնութիւն բառը ներկայիս կը սահմանուի իբրև «համադրութիւնը էակի մը կամ առարկայի մը ա՛յն յատկութեանց որոնք ի բնէ իրեն են, և որոնցմով այդ էակը կամ առարկան կը զատորոշուի միւսներէն»: Հայերէն լեզուին մէջ ալ, արդարև, բուն բառը, որ արմատն է բնութիւն եզրին, կը նշանակէ սկզբնական, հարազատ: Այստեղ Աստուածային Բնութեան իբրև յատկանիշ կը տրուին երկու ածականներ, «Անեղ և անմահ», որոնք միայն Աստուծոյ յատուկ են և զԱյն կը զատորոշեն միւս բոլոր էակներէն:

«Անեղ» կը նշանակէ նա որ չէ ստեղծուած, նա որ ուրիշի մը չի պարտի իր գոյութիւնը, հետեաբար՝ նա որ ինքնագոյ է: Իսկ «անմահ» ածականը կը շեշտէ աստուածային բնութեան մահուան կամ վախճանի մը ենթակայ չըլլալը: Այս երկու կարճ և համապարփակ ածականները իրենց մէջ կը խտացնեն աստուածային բնութեան յաւիտեականութիւնը: Անեղ ածականը կը յատկանշէ Աստուծոյ յաւիտեականութիւնը անցեալին յարաբերաբար, այսինքն կը հաստատէ Անոր անսկիզբ ըլլալը՝ իսկ անմահը՝ ապագային յարաբերաբար, այսինքն կը հաստատէ Աստուծոյ անվախճան ըլլալը:

«Արարիչ հրեշտակաց եւ մարդկան եւ աննայն եղելոց»: Աստուածային բնութեան միւս կարևորագոյն ստորեկներն է Արարիչ ըլլալը: Առաջին երկու ածականները կը յատկանշեն Աստուծոյ կայական հանգամանքը. իսկ Արարիչը՝ կը յատկանշէ Անոր ուժական և գործող հանգամանքը: Առաջին երկու ածականները յարաբերական են ժամանակի, իսկ Արարիչը՝ միշտի, որուն մէջ գոյութիւն ունին, կը գործեն և կը բարեւրըջուին եղած բաները:

Աստուած Արարիչ է նախ՝ հրեշտակներու: Հրեշտակներու ստեղծումը չէ պատմուած Աստուածաշունչի ստեղծագործութեան պատմութեան մէջ, սակայն շարունակաբար ակնարկուած է անոնց գոյութեան և գործունէութեան Ս. Գիրքի սկիզբէն մինչև վերջը, Ծննդոցէն մինչև Յայտնութեան

գիրքը: Հրեշտակ կը նշանակէ մեր լեզուին մէջ պատգամաւոր, և իր այս հասարակ լեզուով գործածուած է անխտիր՝ իբրև պատգամաւոր զրկուած թէ մարդերու համար և թէ՛ հոգեգէն էակներու համար: Հրեշտակ բառին այս իմաստը — պատգամաւոր — կը ճշդէ մասամբ մը գէթ անոնց գերը և զիրքը ստեղծագործութեան մէջ: Արդարև հրեշտակները Աստուծոյ պատգամաւորներն են, որոնք կը զրկուին Անոր համաները և կամքը գործադրելու համար, ինչպէս կը հաստատէ Եբրայեցեաց Թուգթի հեղինակը: Հրեշտակները, կ'ըսէ ան, «ըստ պատահարոց Հոգիներ են, որոնք կը զրկուին ի սպասաւորութիւնը անոնց՝ որոնք փրկուցութիւնը պիտի ժողովեան» (Ա. 14): Եւ արդարև քաղում են տեղիքներ, թէ՛ Հին և թէ՛ Նոր Կտակարաններու մէջ, ուր հրեշտակներ կը զրկուին սպասաւորելու համար Աստուծոյ ընտրեալ ժողովուրդին, թէ Հին եկեղեցիին և թէ Նոր եկեղեցիին, ինչպէս նաև Աստուծոյ ընտրեալ մարդերու թէ՛ Հին և թէ՛ Նոր Ուխտին մէջ, Հրեշտակներ երեւեցան և օգնեցին Արքահամին և Մովսէսին, Ս. Կոյսին և մինչև իսկ Յիսուսին, Պետրոսին և Պողոսին ու գեո ուրիշ շատ շատերուն:

Հրեշտակներու բնութեան մասին մեր գիտցածն այն է որ անոնք հոգեղէն էակներ են, օժտուած՝ բանականութեամբ և ազատ կամքով, մարդոց պէս, և հետեաբար լոկ ոյժեր չեն այլ՝ անձնաւոր էակներ: Աստուած զանոնք ստեղծած է ոչ միայն Աստուած զանոնք ստեղծած է զանոնք իբրև հոգիներ, այլ ստեղծած է զանոնք «կրակէ»: Աստուած արար զհրեշտակս իւր հոգիս, և զպաշտօնեայս իւր ի հուր կիզելոյ» (Սլմ. ճգ. 4):

Կրակի պատկերը կը յատկանշէ հրեշտակներու արագաշարժութիւնը և մաքրութիւնը:

Առ հասարակ ընդունուած է որ հրեշտակներու թիւը հազարք հազարաց է և բիւրք բիւրուց. ոչ կ'աւելնան, ոչ ալ կը պակսին: Դարձեալ ընդունուած է որ անոնք զանազան դասակարգերու կը բաժնուին, համաձայն իրենց պաշտօններուն, և ըստ իրենց մերձաւորութեան Աստուծոյ, և ըստ իրենց հրեշտակապետաց և երգութիւններ (Տես Հրեշտակապետաց և երգութիւններ): Ընդունուած է նաև որ արականները, Ընդունուած է նաև որ ար-

մէն ոք, յատկապէս փոքրիկները, իրենց պահապան հրեշտակներն ունին (Մատթ. ԺԷ. 10): Կան հրեշտակագետներ որոնցմէ երկուքը յանուանէ յիշատակուած են Աստուածաշունչին մէջ. Գաբրիէլ (Դան., Ը., 16, Ղկա. Ա., 19 և 26) և Միխայէլ (Դան., Ժ., 13, Յսեղա. Ա., 19, Յայտ., ԺԲ., 17):

Ինչպէս մարդը, այնպէս ալ հրեշտակներէն ոմանք, մեղանչեցին և ինկան Աստուծոյ շնորհքէն և վտարուեցան Անոր ներկայութենէն: Այս մասին Յուդայի Թուգթին մէջ ըսուած է. «Հրեշտակները որոնք չպահեցին իրենց իշխանութիւնը, այլ թողին իրենց բնակութիւնը, Աստուած դատաստանի մեծ օրուան համար պահեց զանոնք խաւարի մէջ մշտնջենական կապանքով» (հմբ. 6): Աստուծոյ կողմէ իրենց համար սահմանուած իշխանութիւնը և դիրքը չպահող, և ամբարտաւանելով աւելի բարձր իշխանութեան ձգտող այս հրեշտակները կորսնցուցին նաև իրենց ունեցած դիրքը և վերածուեցան աստանաեցում: որոնք կ'աշխատին ամէն միջոցներով մարդիկն ալ իրենց վիճակին իջեցնել, զանոնք փորձութեան և մեղքի մէջ ձգելով: Պօղոս Առաքեալ չարութեան դեմ կը կոչէ «հրեշտակստան»: Պետրոս Առաքեալ կ'աւելցնէ. «Զեր ոսոյսը, Սատանան, առիծի պէս կը մոնչէ, կը պտտի և կը փնտռէ թէ ով կ'ուզէ» (Ա. Պետր., Ե., 8):

Աստուած Արարիչ է նաև Մարդկան: Մարդու ստեղծումը իր մանկունակ պարզութեան և գրաւչութեան մէջ պատմուած է Աստուածաշունչի առաջին էջերուն մէջ: Այդ էջերը մէկ կողմէն կը ծածկեն ստեղծագործութեան հրաշալի երևոյթին, այսպէս ասած՝ իրական երեսը, միւս կողմէն սակայն կը յայտնեն այս վսեմ և անպատմելի արարչական արարքին, այսպէս ըսեմք, խորհրդանշական երեսը: Այս կապակցութեամբ կրնանք մեր Տիրոջ Յիսուս Քրիստոսի հետ կրկնել. «Գոհանամք զքէն, Տէր երկնի և երկրի զի ծածկեցեր զայս յիմաստեց եւ ի զիստեց եւ յայտնեցեր զայոյց» (Ղկա., Ժ. 21): Արդարև աշխարհի «իմաստունները և գիտուններ» իրենց ծովածաւալ գիտութեամբ գեռ ստուգապէս չեն գիտէր թէ մարդ ինչպէս և երբ երեցած է երկրագունտի վրայ. այս մասին իրենց ըսածները առհասարակ վարկածներ են՝ յաճախ մին միւսը

հերքող: Իսկ Աւետարանի ամենուրեքն զիտեն թէ ինչ կերպով մէջտեղ եկած է մարդը. «Եւ Աստուած ստեղծեց մարդը. Աստուած մարդը ստեղծեց ըստ իր պատկերին. արու և էգ ստեղծեց. օրհնեց զանոնք Աստուած և ըսաւ. Աճեցէք ու բազմացէք, և լեցուցէք երկիրը և տիրեցէք անոր, իշխեցէք ծովու ձուկերուն, երկնքի թռչուններուն և երկրի բոլոր կենդանիներուն» (Ծննդ., Ա., 26-28): Աւելին. «Եւ ստեղծեց Տէր Աստուած մարդը երկրի հողէն. և փչեց անոր երեսին կեանքի շունչը, և մարդը եղաւ կենդանի հոգի» (Ծննդ. Բ. 7): Մարդու ստեղծման և բնութեան մասին բաւական է այսչափ զիտնալը, որովհետեւ էականը այսչափ է. թէ մարդ ստեղծուած է Աստուծոյ կողմէ, թէ՛ Անոր պատկերին համաձայն ստեղծուած է. թէ՛ մեր երկրագունտին իբրև իշխան ստեղծուած է. և թէ իր մէջ կայ մասնիկ մը Աստուծոյ անմահ շունչէն որ կը վերածէ զինք անմահ հոգիի: Ասկէ աւելին, եթէ մարդու կազմախօսութեան մասին է՝ մարդուն ծանօթութեան սահմանին մէջ կ'իյնայ, իսկ եթէ մարդու ծագման և սկիզբի մասին է, անկայուն վարկած է լոկ:

«Ամենայն եղելոց». Աստուած ինքնին «Անել» է, բայց ստեղծիչն է բոլոր եղելաներուն, որոնց մէջ են ոչ միայն մեր երկրագունտի վրայ եղածները, այլ նաև արեւ ու լուսինը, աստղերն ու մոլորակները, և ամբողջ տիեզերքի պարունակութիւնը: Իր անունին արժանի ու է զիտնական կամ իմաստասիրական գրութիւն չի կրնար ըսել որ բնութիւնը արդիւնք է պատահականութեան կամ բախտի: Պարկեշտ գիտնական մը կամ իմաստասէր մը, եթէ չուզեր յայտարարել Աստուածաշնչական ճշմարտութիւնը, միակ հաւաստումը որ կրնայ ընել տիեզերքի ծագման մասին խոստովանելն է թէ «չէինք զիտեր»: Որովհետեւ «զիտնականք» իրապէս չեն գիտեր թէ նիւք ըսուածը ի՞նչպէս ի գոյ եկած է. չեն գիտեր թէ անկենդան նիւթին մէջ ի՞նչպէս կեանք մտած է. չեն գիտեր թէ կեանքին մէջ ուրկէ՞ զգացականութիւն և բանականութիւն մտած է: Կրնան եղող այս երեւոյթները վերլուծել, մասերու բաժնել, անոնց գործելու օրէնքներուն վերահասու ըլլալ, բայց երբեք համոզիչ կերպով մէկէն

միտին անցման օգակը պիտի չկրնան զբանել կամ բացատրել, որովհետև անոնք ստեղծում են:

Արեմն Աստուած Արարիչն է բոլոր եկեալներուն, մէջն ըլլալով կեանք ու բանականութիւն ունեցող էակները: Գիտական հաւատումը բրած չեն ըլլար բոլոր անոնք որ կը մերժեն Աստուծոյ գոյութիւնը և Տիեզերքի Արարիչ ըլլալը, վասնզի զայն ժըխտելու ապացոյցը չունին: Ժնշդեո իրենց իսկ հաւատումով պարկեշտ գիտութիւնը հաւատում կ'ընէ հիմնուելով լոկ հաստատում իրականութեանց վրայ: Քրիստոնեաներո երբ մեր խօսքը կ'ուզենք Աստուծոյ և կ'ըսենք. «Հաւատով խոստովանիմ և երկիր պագանիմ Քեզ . . . Արարիչ ամենայն եղելոց» չենք յաւակնիր, ոչ ալ կը փափաքինք, «գիտական» հաւատում մը ըսել, այլ՝ զուտ դաւանական: Նոյնպէս բոլոր անոնք որ կը յանդգնին ըսել. «Զենք հաւատար ու չենք խոստովանիր որ Աստուած կայ, ոչ ալ կը հաւատանք որ համազօրքը Աստուծոյ մը կողմէ ստեղծուած է», թող գիտնան որ կրօնական հաւատում մը կ'ընեն, և ոչ թէ՛ գիտական: Թող ոչ ոք պարծենայ յանուն զիսուքեան երբ կ'ուրանայ Աստուծոյ գոյութիւնը և Արարչութիւնը, որովհետև ոչ ոք պիտի կրնայ փաստել Աստուծոյ, այսպէս ասած, չգոյութիւնը, ոչ ալ՝ Անոր Արարիչ ըլլալը: Տգէտներ լոկ կրնան խաբել տգէտները գիտութեան աւանդով: Ծշմարիտ գիտութիւնը ուրիշ բան չէ եթէ ոչ բացատրել Աստուծոյ ստեղծագործութիւնը, գտնել բնութեան մէջ թաքնուած ոյժեր և օրէնքներ և դանձր կիրարկել մարդկային կեանքի առաւել բարութեան համար:

«Աղորմեա Քո արարածոց» միակ խնդրանքն է առաջին տունին մէջ: Կրթիքէ մեր բոլոր տպագրուած ժամագիրքերու մէջ այս խօսքին կը յաջորդէ «Եւ ինձ բազմամեղիս» ասութիւնը թէ՛ այս տունին և թէ՛ բոլոր տուներուն վերջաւորութեան: Սակայն թերեւս աւելի շիտակ է ընդունիլ որ առաջին այս տունը կը վերջանայ լոկ արարածներու վրայ Աստուծոյ ողորմութիւնը հայցելով, իսկ երկրորդ տունին մէջ՝ լոկ աղօթաւորին համար Աստուծոյ գութը խնդրելով, և ապա յաջորդ տուններուն մէջ՝ երկուքին համար ևս^(*):

«Աղորմեա Քո արարածոց». համապարփակ այս խնդրանքը արտայայտութիւնն է քրիստոնէական ազնուագոյն ոգիի մը որ մարմնացած է Շնորհալիին և մեր ժողովուրդի հաւատար գանգուածին մէջ. նախ աղօթել ուրիշ՝ համար, և աղօթել բոլոր արարածներու համար, արդարեւ մեծ և մաքուր հոգիի նշան է:

Աստուծոյ ողորմութիւնը հայցելով, ըլլայ ուրիշներու և ըլլայ մեր վրայ. ըսել կ'ուզենք որ ենթական իր արժանիքով կամ արդարութեան օրէնքով չէ որ Աստուծոյ շնորհքին և պարգևներուն կ'արժանանայ, այլ լոկ Աստուծոյ ողորմելով, Աստուծոյ ողորմութիւնը հայցելու այս զաւաճարը շատ շեշտուած է Քրիստոնէական եկեղեցիի մէջ, այն տատիճան որ «Տէր Աղորմեա մաղթանքը եկեղեցիի գերագանց և ամենէն շատ կրկնուած աղօթքն է: Ըլլայ մենք, ըլլան Յոյներ կամ միւս եկեղեցիներ երբեք անհատում կերպով կը կրկնենք զայն. «Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա . . .» «Քիրիէ էլէյսոն, Քիրիէ էլէյսոն, Քիրիէ էլէյսոն . . .»: Ասով եկեղեցին սակայն ոչ սակաւահաւատութեան նշան ցոյց կուտայ, ոչ ալ՝ զԱստուած կը տաղտկացնէ, այլ՝ լոկ կը հաստատէ իր ամբողջական կախումը Աստուծմէ, և իր անկարողութիւնը՝ իր անհատական ոյժերով մեղքի ճահիճէն գուրս գալու, և կը շեշտէ այն իրողութիւնը թէ հագեկան զօրութիւնը և շնորհքները կ'իջեն Աստուծոյ ողորմութենէն: Ուրեմն աղօթենք Շնորհալի Հայրապետի հետ:

Հաւատով կը խոստովանիմ եւ կ'երկրպագեմ Քեզ, Հայր եւ Ողի եւ Ա. Հոգի, անստեղծ եւ անմահ բնութիւն, Ստեղծիչ հրեշտակներու եւ մարդաց եւ բոլոր եղածներուն, Աղորմէ Քո արարածներու, եւ ինձի բազմամեղիս:

(2)

ՇՆՈՐՀԱՐ ԵՊԻՍԿՈՊՈՍ

(*) Սրբոց Յակոբեանց Զեռագրատան բազում Ուղմասաց գրքերէն և Ժամագիրքերէն, որոնց մէջ առհասարակ կը գտնուի «Հաւատով խոստովանիմ» աղօթքը, առնուած 1580ին, և թիւ 200 Ժամագիր-Սաղմոսը, գրուած 1621ին, չունին առաջին տունին քը, գրուած 1621ին, չունին առաջին տունին մէջ «Եւ ինձ բազմամեղիս» մասը, իսկ երկրորդ տունին մէջ՝ «Աղորմեա Քո արարածոց»ը: Մնացեալ տուններու մէջ երկուքն ալ կան: Այսպէս է եւս 36 լեզուեան «Հաւատով խոստովանիմ» աղօթագրքին մէջ, հրատարակուած ի վենետիկ: